ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

Կատարող՝ Վարդուհի Պողոսյան

Դպրոց՝ Երևանի Ա. Դ. Սախարովի անվան հ. 69 հիմն. դպրոց

Առարկա՝ Պատմություն

Կազմակերպություն՝ «Երևանի Վ. Վարդևանյանի անվան հ. 173 հիմն. դպրոց» ՊՈԱԿ

Խմբի ղեկավար՝ պ. գ. թ. Արմեն Աբգարյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ.....4

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ.....8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժության ուսումնասիրության առարկան բանական մարդն է՝ homo sapiens-ը: Մարդու զարգացման, կայացման, աշխարհայացքի ձևավորման գործում իրենց ազդեցությունն ունեն մի շարք գործոններ: Այդ գործոններից մեկն էլ հանդիսանում է դաստիարակությունը, որը բավականին մեծ ընդգրկում ունեցող հասկացություն է: Դաստիարակության հիմնական էությունն անձի բարոյական դաստիարակությունն ու արժեհամակարգային զարգացումն է:

Բարձրաձայնված թեման արդիական է, քանի որ արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար առարկաների դերը: Մասնավորապես անգնահատելի է պատմության դերը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման դերն ու կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Մասնավորապես, գլոբալիզացիայի արդի պայմաններում, ժամանակի հրամայականն է դաստիարակել ազգային հենքի վրա՝ համամարդկային արժեքներ կրող մտավորական և քաղաքացի:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

1. Բացահայտել սովորողների արժեքային համակարգի զարգացման հիմնական ուղղությունները պատմության դասերին,

2.Բացահայտել՝ որոնք են արժեքային համակարգի զարգացման վրա ազդող գործոնները

Աշխատանքում անդրադարձ է կատարվել նաև կրոնի դերին, նրա ունեցած ազդեցությանը մարդու բարոյական նկարագրի, աշխարհաճանաչողության և արժեհամակարգի ձևավորման վրա:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Արժեհամակարգային դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից, այն հանրությունից, որում նա ապրում և գործում է: Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում, եթե չկան նյութական, բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ, քաղաքակրթություն, ապա այնտեղ անձի բարոյականությունն ու արժեհամակարգային զարգացումը կայուն լինել չեն կարող:

Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը, այդպես էլ արժեհամակարգի ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է դաստիարկ-ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները ոչ միայն գիտելիքներ յուրացնեն առարկայից, այլև նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությանների և արժեքների համակարգ:

Մարդու արժեհամակարգային զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքում: Արժեքների ձևավորմանը նպաստում են անձի շփումները, հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողութ–յունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը: Հատկանշական է, որ արժեհամակարգի կայացման վրա ներգործող ազդեցություն ունեն նաև բարոյական որակները: Այդպիսիք կարող են հանդիսանալ հայրենասիրությունը, ազգասի–րությունը, անձնազոհությունը և այլ, որոնք էլ հենց հիմք են դնում ազգային արժեհամակարգի, ազգային մտածողության և պատմական հիշության արմա–տավորման և պահպանման համար: Առանց պատմական հիշողության ժողովուրդ չկա: Հովհ. Թումանյանը գրում է. «Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»: Հայրենիքը նախնառաջ հող է՝ կենսատարածք, որը հնարավորություն է տալիս ազգին գոյատևելու և զարգանալու ժամանակի պահանջներին համընթաց: Հայրե–նասիրությունը (հունարեն patre-հայրենիք), իրենց երկրի հանդեպ մարդկանց վերաբերմունքը բնորոշող հասարակական և բարոյական որակ է, որը դրսևորվում է

որոշակի եղանակով՝ գործողությունների և հասարակական զգացմունքների ամբողջությամբ[1]:

Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ նրա մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական:

[1] Տե՛ս Ամիրջանյան Յու., Սահակյան Տ., Մանկավարժություն, (Այսուհետ՝ Մանկավարժություն...), Երևան, 2001, էջ 357:

Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա[2]:

Հայրենիքը սկսվում է տնից, հողից, ջրից: Թե՝ ընտանիքը, թե՝ դպրոցը պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Դպրոցում այն պետք է ապահովվի հիմնականում կրթության բովանդակության միջոցով: Երեխան պետք է հարգի և սիրի իր ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սովորույթներն ու մշակույթը, ճանաչի իր ազգային արժեքները, չէ՞ որ անձը իր վարքի համար հիմք է ընդունում էթնոսի պատմությունն ու մշակույթը: Արժեհամակարգային դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլև նրա կարևոր գործառնությունն է, հասարակությանն այնպիսի մարդու հավելումը, որը մշտապես կկատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հօգուտ հասարակության և հօգուտ մարդու: Բարոյական արժեքներով դաստիարակված մարդը առաքինի է, բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստուկացը, գործողություններն ու արարքները, մարդկանց հետ հարաբերություններն, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը, յուրահատուկ են և օրինակելի:

Մարդկային հասարակության մշակութային գանձարանում դաստիա–րակության գործընթացը հիմնականում ընկալվել է մարդասիրական նկատառումներով, թեև քիչ չեն դեպքերը, երբ համամարդկայնորեն մերժված որոշ գաղափարներ ու տեսություններ հաջողությամբ իրականացրել են իրենց նպատակային դաստիարակչական ներգործությունը:

Արժեհամակարգի ձևավորման մեջ իր անուրանալի դերն ու տեղն ունի կրոնը: Քրիստոնեական դաստիարակության հիմքում ընկած է արժեհամակարգային դաս–տիարակությունը:

Ժողովրդի ու երկրի փրկությունը ներքին բարոյականության մեջ է, երբ հասարակությունը զուրկ է դրանից, որքան էլ որ նա ունենա հզոր պարիսպներով ու աշտարակներով ամրացված շեն քաղաքներ՝ անխուսափելիորեն անկում կապրի: Բարոյականությունը, սրբությունն ու աստվածապաշտությունը կարող են միավորել

[2] Տե՛ս Սուխոմլինսկի Վ.Ս., Սիրտս նվիրում եմ երեխաներին. Կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա, Երևան, 1977, էջ 46:

հասարակությունը, առողջացնել այն միասնությամբ ու միաբանությամբ, որով կարելի է դիմակայել աղետներին[3]: Անկախ դաստիարակության գործընթացի լայնածավալ ընդգրկման, այն նպատակային գործընթաց է, դեպի լավը վերափոխելու մարդուն կամ մարդկանց: Դեռևս, Ք. ա. V-IV դարերի մտածողները գտնում էին, որ ոչ մեկը պատահականորեն չի դառնում լավ մարդ, դրա համար անհրաժեշտ է նպատակային դաստիարակչական ներգործություն, որը, իբրև նպատակային գործընթաց, իր մեջ ամփոփում է նպատակի և բովանդակության, սկզբունքների, մեթոդների, ձևերի, միջոցների ու ստացված արդյունքների՝ ուղղակի և հակադարձ կապերի փոխկապվածություն:

Արժեհամակարգի ձևավորմանն ուղղված դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը: Երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյական բարձր որակները՝ հումանիզմը, կոլեկտիվիզմը, հայրենասիրությունը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակությունը և այլն[4] :

[3] Տե՛ս https://vilashes.ru/hy/nravstvenno-duhovnoe-vospitanie-kak-osnova-stanovleniya-lichnosti.html, Բարոյական և հոգևոր կրթությունը՝ որպես երիտասարդ սերնդի անձի ձևավորման հիմք, /16.09.23/
[4] Տե՛ս Մանկավարժություն..., էջ 359:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ Սովորողը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս

կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն[5]:

Հմուտ ուսուցիչը պետք է արժեհամակարգի ձևավորման ուղիներ որոնի, սովորողների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողություններ: Նա իր օրինակով պետք է բարություն ու համեստություն սերմանի: Շատ կարևոր են բարոյական թեմաներով զրույցները: Նախօրոք լավ մշակված հարցերի միջոցով կարելի է քննարկել որևէ անձի վարքագիծը, բնավորության գծերը, արարքները, վերլուծել որևէ կինոնկար, կարդացած վեպի հերոսների հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Արժեհամակարգային դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Կայուն արժեհամակարգի ձևավորման հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

•Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:

•Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:

•Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:

•Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ[6]:

Խթանելով բարոյական արժեհամակարգի ու վարքի եղանակների առաջացումը, դաստիարակ-ուսուցիչը պետք է.

• ստեղծի պայմաններ գործողության այս կամ այն եղանակի բարոյական ընտրության իրագործման համար,

---

[5] Տե՛ս Սուխոմլինսկի Վ.Ս., նշվ. աշխ., էջ 22:
[6] Տե՛ս Բարոյական դաստիարակությունը որպես..., էջ 382:

• հասկանա ովորողի բարոյական պահանջմունքների զարգացման մեջ ծագող հակասությունների պատճառը, բնույթը, նպաստի դրանց դաստիարակչական առումով ավելի արդյունավետ լուծմանը,

• ներգործի այն անձանց վրա, որոնք կազմում են երեխայի մերձակա միջավայրը:

Ժամանակակից դասակարգմամբ բարոյական արժեքների դաստիարակության խնդիրները բաժանվում են երկու խմբի.

• խնդիրներ, որոնք ուղղված են արժեհամակարգի բաղադրատարրերի ձևավորմանը,

• խնդիրներ՝ ուղղված անձնային բարոյական հատկությունների ձևավորմանը:

Առաջին խմբի խնդիրները կայուն են և անփոփոխ և նպաստում են երեխայի մեջ բարոյականության յուրաքանչյուր բաղադրիչի ինքնուրույն ձևավորմանը: Երկրորդ խմբի խնդիրներն իրենց բնույթով փոփոխական են ու շարժուն, դրանք բնորոշում են տվյալ հասարակության պահանջները՝ վաղվա քաղաքացու անձնային որակների ձևավորման ուղղությամբ: Եթե նախկինում հասարակությունն առավել կարևորում էր հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի, աշխատասիրության և կոլեկտիվիզմի դաստիարակությունը, ապա հասարակության զարգացման ներկա ժամանակահատվածում շեշտադրվում են այնպիսի անձնային հատկություններ, ինչպիսիք են՝ մարդասիրությունը (հումանիզմ) և հանդուրժողականությունը, ձեռներեցությունը և կյանքի հանդեպ ակտիվ դիրքորոշումը, ստեղծագործական ընդունակությունները և կրեատիվ-ստեղծարար դիրքորոշումը, ինքնասիրությունն ու արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունն ու համագործակցելու կարողությունները, քաղաքացիական հատկությունները, այսինքն՝ այն ամենը, ինչ հանգեցնում է սոցիալական զգացմունքների զարգացմանն ու ձևավորմանը :

Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Սովորողի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական

ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հատկապես դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական,ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Պատահական չէ արևմտահայ մանկավարժ Նիկողայոս Զորայանի մտահոգությունը, թե «ինչու համար դաստիարակութիւնը չի յաջողիլ ազգին մէջ, կամ ինչ ընելու է,որ ազգային դպրոցներն առաջ երթան»[7]:

Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը՝ առաջարկելով վերակառուցել դպրոցը՝ մոտեցնելով այն ազգային ակունքներին, բարձրացնելով հասարակության կենսամակարդակը և դպրոցները համալրելով մասնագիտական բարձր ունակություններ ունեցող մանկավարժ-դաստիարակներով: Հետևապես, ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր

[7] Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002, էջ 65:

նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը,ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է դասավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության,որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ,այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքներրձ: Իսկ անձի հոգեաշխարհի վրա ազդող և այն հարստացնող կարևորագույն գործոն է գրականությունը,որը բացահայտում է մարդու հոգևոր կյանքի հակասություններն ու ելևէջները,հույզերն ու զգացմունքները[8]:

Փորձենք հասկանալ՝ ինչպե՞ս է ձևավորվում արժեքային համակարգը Պատմության դասերին:

Նախատեսվում է, որ Պատմությունը յուրաքանչյուր դպրոցը ավարտողի մեջ պետք է ձևավորի՝

- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
- Ունենա ազգային ինքնագիտակցություն

[8] Տե՛ս նույն տեղում:

- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու գործում ազգային պատմության իմացության նշանակությունը
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն…[9]:

Այսինքն՝ Պատմության դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական իրադարձություններին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի համար անհրաժեշտ է՝ պատմական հերոսների օրինակով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, ազնվություն, հայրենասիրություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ: Պետք է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին:

[9] Տե՛ս https://escs.am/files/files/2021-05-06/3515ba6bd08e27dd503e4d3a9518bf03.pdf, «Հայագիտություն» բնագավառի փորձնական չափորոշիչ և ծրագրեր (5-12-րդ դասարաններ), /22.09.2023/

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով այս հետազոտությունը կարող ենք եզրակացնել, որ պատմության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Այն սովորողի մեջ ձևավորում է ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամություն և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:

Պատմության ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Առարկայի ուսուցանումը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու ,ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները:

Այսպիսով՝ ամբողջացնելով ասվածը, եկանք այն եզրակացության, որ արժեհամակարգային դաստիարակությունը՝ բարոյական արժեքների հիման վրա, ուսուցչի և սովորողի կողմից բազմաբնույթ, նպատակաուղղված փոխներգործությունն է՝ անձի բարոյական հատկանիշների ձևավորման նպատակով:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ամիրջանյան Յու., Սահակյան Տ., Մանկավարժություն, Երևան, 2001:
2. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002:
3. Սուխոմլինսկի Վ.Ս., Սիրտս նվիրում եմ երեխաներին. Կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա, Երևան, 1977:
4. https://vilashes.ru/hy/nravstvenno-duhovnoe-vospitanie-kak-osnova-stanovleniya-lichnosti.html, Բարոյական և հոգևոր կրթությունը `որպես երիտասարդ սերնդի անձի ձևավորման հիմք, /16.09.23/:
5. https://escs.am/files/files/2021-05-06/3515ba6bd08e27dd503e4d3a9518bf03.pdf, «Հայագիտություն» բնագավառի փորձնական չափորոշիչ և ծրագրեր (5-12-րդ դասարաններ), /22.09.2023/: